ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 սեպտեմբերի 2024 թվականի N 1432-Ա

ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ԳՈՒՅՔ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածի 1-ին մասը, 594-րդ, 685-րդ և 688-րդ հոդվածները, Հողային օրենսգրքի 89-րդ և 65-րդ հոդվածները, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերը, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետը և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Ընդունել սույն որոշման N 1 հավելվածում ներառված գույքի նվիրաբերությունը և N 2 հավելվածում ներառված գույքի նվիրատվությունը Հայաստանի Հանրապետությանը և ամրացնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին (այսուհետ՝ կոմիտե):

2. Կոմիտեի նախագահին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո քառամսյա ժամկետում համապատասխան համայնքների ղեկավարների հետ համատեղ ապահովել սույն որոշման 1-ին կետից բխող նվիրաբերության և նվիրատվության պայմանագրերի կնքման և գույքի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը՝ պայմանագրերում սահմանելով, որ պայմանագրերի կնքման և գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման աշխատանքները ենթակա են իրականացման համապատասխան համայնքների միջոցների հաշվին.

2) համապատասխան փաստաթղթերի փաթեթը (շինության նախագիծ, շինարարության թույլտվություն, ավարտված շինարարական օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ, ավարտական ակտ (շահագործման թույլտվություն), գույքի չափագրում և այլն) համապատասխան մարմնի (ըստ՝ N 1 և N 2 հավելվածների) կողմից կոմիտե ներկայացնելուց հետո եռամսյա ժամկետում իրականացնել նոր կառուցվող գույքի (ըստ՝ N 1 և N 2 հավելվածների) նկատմամբ Հայաստանի Հանրապետության սեփականության իրավունքի պետական գրանցման աշխատանքներ.

3) սույն կետի 2-րդ ենթակետում նշված աշխատանքների ավարտից հետո եռամսյա ժամկետում ապահովել նոր կառուցվող գույքի (ըստ՝ N 1 և N 2 հավելվածների) միակողմանի ընդունման աշխատանքները՝ դրանք հաշվառելով կոմիտեի հաշվեկշռում.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված աշխատանքների ավարտից հետո մեկամսյա ժամկետում կնքել N 1 և N 2 հավելվածներում ներառված գույքի անհատույց օգտագործման իրավունքի պայմանագրեր՝ դրանցում նախատեսելով, որ պայմանագրերի կնքման և իրավունքի պետական գրանցման աշխատանքները ենթակա են իրականացման համապատասխան պետական ոչ առևտրային կազմակերպությունների միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

06.09.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ